

ՀԱՆԴԻՍ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՊՈՄՊԷՅ ՀՆԴԿԱՑ

(Տես Հտ. ԽԱ, էջ 168):

Ի ՊՈՄՊԷՅ

Ա.

Հնդկի սպասաւոր մը. — Օրոշան խոսակցուքնան նիւրբ. — Փողոցին տեսարանը. — Մորացկանաց ողորք. — Վաճառանոցը. — Երազկա. վաճառք. — Պողովմանաք. — Սնանկկալ անսնաս մը. — Հաւաքմանաք. — Ի հրապարտասրան Աւտորիոյ. — Նոր սենեկիս քնակիւք:

« Յորչափ 'ի Հնդկիս մնաս, իմ խրատոս այս ըլլայ քեզի, — կը գրէր ինծի երկրին փորձ բարեկամ մը. — կերակուրդ ըլլայ յաճախ, այլ ամենաթեթեւ. մանդինի չափաւոր գործածութիւն. մեծ գգուչութիւն և չափաւորութիւն կանաչեղինի և պտղեղինի. մասնաւոր փոյթ ընելու ես ստամոքսըդ թեթեւ բռնելու. Գիտնաս որ երկրին սովորական հիւանդութիւնը մաղձացուն է. որ թէպէտ միայն բնիկներուն մէջ յարատեւարար կը բուժի, այլ փորք անըզգուշութենէ մը եւրոպացւոյն ալ աղետալի կ'ըլլայ: Երկրին ցերմութիւնը մարմնոյն արտաշնչութիւնը հնչեռնա կը գրգռէ. ուշ գնելու ես զգեստեղինաց, որպէս զի պաղաւտութենէ պահպանութիւն Գունդ ըլլայ չափաւոր. թուլացուցիչ օդը երկայն քուն ըլլալու կը հրաւիրէ. ժուժկալ արիւթութիւն ունենալու ես անոր դէմ գնելու, եթէ չես ուզեր որ մարմինդ թուլանայ, կենսական գործողութիւններդ դանդաղին և գգեղ հիւանդութեանց ենթակալ ընեն. Քնացած ժամանակդ նայէ որ բրդեղեն ծածկոցով մը ստամոքսդ պատասպարես, գիտնաս որ այս գգուչութիւնը անհրաժեշտ է »:

Աստեղ կարեւոր ազգարարութիւնք էին ինծի, որ ոչ միայն տեղւոյն ու կլիմային անտեղեկութիւն էի, այլ և անփոյթ անձնական գգուչութեանց: Եւ հիմա որ այս Հողուս վրայ կը գտնուէի, անմիջապէս որ աչքերս առջի օրուան արեւուն լուսոյն բացի, խիւղն մտքէս յեղեղեցի: Արեւը գեռ նոր սկսեմ

էր երկնից կամարը գունաւորել. բայց զիւրապին զովը գեռ ևս կը տնէր: Անուշ թուութիւն մը զիս անկողնոյ մէջ կը դանդաղեցընէր, երբ յանկարծ թմրութեանս մէջէն անակնկալ ձայն մը զիս սթափեցընելով վեր ցատկեցուց:

— Պարոնը սուրճ կը հրամէ. —
— Ել'ըսէր սպիտակազգեստ մէկ մը, բաժակը ինծի հրամցընելով:

Պանդոկին անկող սպասաւորն էր, որ ընդդէմ ակնկալութեանս հանգիստս խռովելով փական չամարեալ սենեկիս դուռը յանգչաստից բացեր մանր էր: Տեղւոյն սովորութեանը անտեղեկա՛խ խորհուրդս 'ի զայրոյթ կը յորդորէր զիս, այլ խոհնմութեան մասնութիւն մը՝ բռնկած արիւնս հանդարտեցուց:

Մինչդեռ լուսնայն սուրճը կ'առնում, սպասաւորը լուսութիւնը կտրելով,

— Եթէ Պարոնը, կ'ըսէ, սպասաւոր մը կ'ուզէ վարձել Հոս գուրսը մէկ մը կ'ըս. պասսէ: Աղէկ ու Հաւատարիմ մէկ մըն է, և Պարոնը ամենայն վստահութիւն կրնայ ունենալ վրաս. չունիմ տարակոյս որ զո՛հ պիտի ըլլայ իրմէն:

Այս առաջարկութեանս իմաստը չէի կրնար հասկնալ. օրը հինգ ռուփի հատուցանելով պանդոկին՝ կը համարէի որ ոչ միայն կտրտած աթոռ մը և անփակելի դուռ մը վայելելու իրաւունք ունէի, հապա նաև պանդոկին տղասուորին փոքրիկ ծառայութիւնը: Բայց կը խաբուէի. պանդոկապետին կը մնար տեղւոյն սովորութեանը զիս տեղեկացընել:


Յատուկ ծառայն 'ի Հնդկաստան ամենակարեւոր կահերէն մէկն է. չունեցողը ճամբորդի մը կը նմանի՝ որ առանց արկեղ կամ ինչ և իցէ կահի կը ճանապարհորդէ: Կահիդ հողը, սենեկիդ մարտութիւնը, սեղանի ծառայութիւնը, հանգերձեղինացդ խնամքը՝ իր մի միայն գործն է: Եթէ տունը մնաս՝ գրանդ ետեւը շան պէս կծկտոմ՝ կամ ակնարկութեանցդ կը սպասէ, և կամ քանգայն շարժելով քեզ կը հովաւարէ: Եթէ

գուրս ելլես՝ հաւատարիմ չան մը պէս հետողող ետեէն կը փութայ: Բարեկամդ կամ ծանօթդ քեզ սեղանի՝ հրաւիրեց. ծառայող անհրաժեշտ պէտք է հետդ տանիս, որովհետեւ իրեն պարտքն է սեղանին վրայ քեզի ուշադիր ըլլալ, խոհակերտցոյ փութով կերակուրդ բերել, և ուրիշ ինչ և ինչ պիտոյիցդ ուշ գնել:

Սենեկիդ բոլոր բովանդակածը իրեն ձեռքն է. և զարմանալով չիս եթէ տեսնես որ քիզնէ առաջ ինքը ունեցածդ կը ձեռնածէ: Արկղերդ կը բանայ, բովանդակածը գուրս կը հանէ, կը գետնիդ, կը կարգաւորէ ուղածին պէս, և այնպէս կը վարի ինչպէս թէ բուն տէրն ինքն ըլլար, և կամ տարիներով միշտ քու գործիդ զբաղած ըլլար: Սենեկիդ ազատութիւնը չունիս ամենին. ինչ և ինչ ժամանակ ծառայող առանց զգացընելու գուռդ կը բանայ, կը մտնէ, կ'ենլէ, կը նայի, կը բնտէս, ինչպէս

թէ պաճուճապատանք մը ըլլայիր: Եւ այնպէս բնական կերպիւ կ'ընէ այս ամենայն՝ որ տրտունջդ բերնիդ մէջը կը մտնի:

Այս ծառայող մասնաւոր գասակարգ մը կը կազմեն, որ գողցես որդւոյ յորդիս Եւրոպացւոց կը սպասաւորեն: Եւ որովհետեւ Հնդկաստան եկող Եւրոպացիք համառօտ ժամանակ կը գադարին, կը հետեւի որ այս ծառայք ալ ստէպ ստէպ տէրերնին փոխելու ենթակայ ըլլան: Թէ ինչ ուստիճանի է իրենց հաւատարմութիւնը՝ անձնական և այլոց փորձիւ կրնամ ապահովցընել, որ եթէ տէրը իւր ունեցածին հաշւոյն ուշադիր չըլլայ, տարւոյն վերջը, եթէ ոչ առաջ, հարկ է որ իւր կարեւորագոյն պիտոյից առարկայքը վերանորոգէ: Աւստի իբր ընդհանուր օրէնք՝ կարեւոր է որ առաջ օրուքն նէն ամենայն ինչ հաշուով ապաստարիճեալը յանձնուի, և ապա ամիսը մէջ մը կամ՝ երկու՝ աչքէ անցուին: Մեծ գողութիւն



Հաւահանգիստ Պոմպէի:

Թիւն ընելու չեն յանգզներ, որովհետեւ ուստիկանութեան ուշադրութիւնը ու խրատութիւնը մեծ է. բայց ուր տիրողը անուշադրութիւնը տեսնեն, կամաց կամաց և յանգագաստից ինչ որ ձեռքերնուն տակ իշնայ՝ կ'անեկուսթացընեն:

Այս անհրաժեշտ սովորութեանը հարկ էր հետեւել. սակայն առաջին ներկայացուցին վարկիւնն այնքան վատ տպաւորութեանը չժուժացի, և ոչ ուշադիր եղայ անոր սպաւններուն որ ծնւելով իւր ծառայութիւնը կ'առաջարկէր: Եւ մինչդեռ տարակուսեալ իրեն կը նայէի, ինքը ծոցէն թրթոց ծանր ծրար մը հանելով՝ ինձ մատոյց յընթերցում: Քառասունի չափ վկայականք էին, անշուշտ ամենը ընծայելոյն ի գովեստ. թէ գինքը ծառայութեանս մէջ առնէի, օր մըն ալ իմս այն պտակին քառասունակ զոհարարից իմաց տրտնաւորութեամբ:

Սակայն մարդ ինչ հաւատք կրնայ ընծայել սպասաւորի մը ներկայացուցած

վկայականին. գթոյ և պատշաճութեան զգացումը շատ անգամ ճշմարտութիւնը կը քողարկէ, և որ աւելին է՝ հոս ի Հնդկիս վկայական մը ստանալը փոքր զրամից մը միայն պէտք ունի: Ի շուկայն մասնաւոր գրագիրք կան՝ որ շնչին փոխարինով մը ինչ և ինչ վկայական կը հնարեն ի շահ խնդրողին:

Խօսքս մարդուն ուղղելով՝

— Ինչ է տալի վարձքս, հարցուցի:

— Եթէ սահապը, կը պատասխանէ, կ'ուղէ աչք մը տալ վերջի տիրոջս այս վկայականին, կ'իմանայ ոչ միայն ամանական վարձքս, հապա նաև այն ամենայն ծառայութիւններն՝ որ կարող եմ մատուցանելու: Որովհետեւ ոչ միայն սենեկին ու կահին ուշ կը գնեմ, ինչպէս սովորական ըսպասաւորները, հապա նաև խոհակերտութիւն կ'ընեմ, վաճառանեցը կ'երթամ, կար կ'ընեմ, ճերմակեղէն կը լուսամ, և ուրիշ ինչ և ինչ ծառայութիւն պէտք ըլլայ կ'ը-

նեմմ Բսկէ զստ ոչ միայն անգղիարէն կը խօսիմ, հապա նաև գաղղիարէն և գերմաներէն: Այս ամեն ծառայութեանցս համար միշտ յիշուեալ ռուսի մամական վարձք առած եմ, թող ընծաները, Հիմա ալ սա հասկէն նոյնչափ կը պահանջվիմ: —

Այս պարզ խոսակցութիւնը ամենայն ինչ կը լուսարանէր և կը լուծէր տարակուսանքս: Իմացուցի իրեն որ իմ չափաւորութիւնս այնքան գիտուն ու կարող սպասաւորի անբաւական էր. որով լաւագոյն բաղդ կը մաղթէի իրեն ուրիշ սահապի մը քով, իւր առանց ուշ դնելու անոր պահանջմանց նուազեցնելուն, յիշելով այն սովոր խօսքը որ կ'ըսէ, թէ տղէտը որչափ հզօր ըլլայ՝ միշտ խորամանկին ստորուկ է, հրաժարեցայ այլ ես անոր մօտիկ ընկէն: Իսկ հազիւ թէ ոմն մեկնեցաւ, ինչպէս թէ մէջերին խօսք դրած ըլլային, ուրիշ մը նոյնանման հաղուստով սենեակը մտաւ, նոյն սովորական սալամով, և նոյնպիսի վկայականաց ծրարով: Երեսըթը աւելի բաւական կ'երեւնար և վստահութեանս աւելի պատասխանող:

— Անգղիարէն կը խօսիմ, հարցուցի:

— Այո, սահապ, պատասխանեց, վկայականներուս մէջ գրած է:

— Կը հատում, ըսի, բայց ես վարքդ սորվելու պահանջն ու ժամանակը չունիմ. անուշդ ինչ է:

— Պանա, պատասխանեց Հնդկիս:

— Շատ աղէկ, ըսի, ինծի ճշդեր է, քեզի եղբի է, մէկու մը ծառայելու ես, եթէ այդ է արուեստդ: Քեզ ծառայութեանս մէջ կ'առնուիմ թէ որ տասնըջորս ռուսիիով գոհ կ'ըլլաս:

— Շատ աղէկ, սահապ, կը յոսամ որ ինծմէ գոհ կ'ըլլաս. հիմա հրաման մ'ուսնիմ:

— Իմ հրամանս այս ըլլայ, ըսի, որ ամեն առտու ժամը եօթին հոս ըլլաս, և երկուշուան ութին արձրիկիս:

Ծռեցաւ ու ելաւ դռնէս դուրս, կծկեցաւ նստաւ: Շան մը կը նմանէր՝ որ սենեկին պահպանութեանը հսկելու սեմին առջին գրուած ըլլար:

Վար ճաշատունը ինչնելով՝ մինչեւ եռնախաճաշելու հետ եմ ուշ կը դնեմ օրուան խոսակցութեանց. Պոմմնի առեաւոր սպանութեան մը վճիռը կտրած էր, և այն դէպքը ամենուն բերանն էր: Խօսողաց մէջէն ոճրագործին վրայ ցաւահացողները չէին պակսիր: Ոճրագործը Հնդկի աղբատ կնիկ մըն էր, չորս զաւակ մայր: Աղբատութենէ աւելի մղեալ՝ քան թէ գողութեան մոլութենէ, գրացոյն երեք-

ամեայ աղջկան թեոց և վզին արծաթեայ զարդերուն յափշտակութիւնը մտածե՛ր էր: Ասկայն բռնի յափշտակելը կարելի չէր, հարկ էր աղջիկը գլխովին մէջ տեղէն վերցնել՝ որ իրը ծածուկ մնայ: Գործը յանգուզն. բայց եթէ ոճրագործը ամեն անգամուն վախար որ գործածը դուրս երևան կ'ելլէ՝ ոչ երբեք ոճիր կը գործէր: Թող որ այս կինս քաղթէն դուրս հեռու տեղ խրճիթ մը կը բնակէր, և հասնական էր որ կասկածը մինչև իր գոռը չգար: Աղջկան թեոցն ըսած քաղաքը կ'ըսէրէ, և հոն ոսկերչի մը խանութը՝ թեոց ապարանջաւոր և վզին քառամանակը կտրիկ ու տայ: Յետոյ գծիմանկեալ աղջիկին կուրս ու լալով կը տանի հեռու լճակի մը քով, և հոն ջրին մէջ կը խղզէ: Ոճիրը յաջողութեամբ գլուխ կը տանի, բայց խիղճն կ'երևայ թէ կ'արթննայ. փոխանակ մեմփեղապէս արժաթեայ զարդերը օգտեցնելու, կը տանի հիւղին մէջ անկիւնը կը ծածկէ, և բրածին հետեանքը տեսնելու կը մնայ:

Կ'երևակայէր որ հայրը իւր աղջիկը փնտռելու պիտոր ելլէ, ինչպէս ալ եղաւ. և վերջապէս անմեղ աղջկան մարմինը լռահկին մէջէն հանուեցաւ: Տարակոյս չկայ որ կրնայ հետեցուի թէ աղջիկը դիպուածով ջուրը ինկած խղզուած ըլլայ, գոնէ ոճրագործին մտածութիւնը առանկ էր: Բայց ով որ ոստիկանութեան գլուխ կեցած մը կ'արժեն բարիք մտածելու անգամ հարձակութիւն չունէր, ամենայն ինչ չար միկնելու սովորութիւն ունէր, ամեն դէպքի մէջէն միշտ չարիք մը հանել կը փնտռէր: Ինչպէս կրնար լաւ այս դէպքիս մէջ որ յայտնի ոճիրը կը քուրդէր: Աղջկան գիտկը մերկ էր ամեն զարդէ. ուրեմն վրան բռնութիւն մը բանեցուցած պիտոր ըլլային: Համբերատար և յարստեալ քննութիւններով խրճիթներէ ու խանութներէ կ'անցնի, ու խալին ծայրը կը բերէ ոճրագործ իրական խիճիթը:

Ոճրագործը կը բռնառնուի, սակայն չկայ վրայ մի որ զինքը ամբաստանէ. զարգերը խրճիթին մէջէն գտնուելու են, իրաւ է. բայց կարելի է թէ օտար թշնամի մը, կամ որ և ինչ մէկ մը գնացած հոն ծածկած ըլլոր, ոստիկանութեան ուշադրութիւնը իրմէն հետեցնելու գիտամար:

Պաշտպան փաստարանը 'ի դուր իւր ամենայն ճարտարութիւնը կը թափէ. չի կըրնար գատաւորեն ճիշտ համոզել 'ի նպատակը պաշտպանեալին. և ոչ իսկ անոնց գուր կրնայ շարժել յիշեցնելով յանցաւորին չորս մատաղ աղոց այրի մայրն ըլլալը, ու

րոնք առանց հօր յուստահատ վիճակի մէջ
կը մնային։ Որինաց խստութիւնը հարկ էր
որ գործադրուէր։ Վճիռ կտրեցին թէ մա-
հապարտ է։ Բայց յուսոյ նշոյլ մը թողին
քաղաքապետին իշխանութեան, որու ի-
րաւասութեանը կը փրորեկէր պատու-
հասը։ Հաստատել կամ մեղմանել։ Այլ
քաղաքապետն իսկ խստութիւնը պատե-
հազոյն համարելով և դեզ ընդդէմ չար օ-
րինակին, բազմաց ակնկալութեանը հակա-
ռակ, մահապարտութեան պատուհասը ՚ի
մշտնջենաւոր կաշանաւորութիւն փոխե-
րէ։ Արդ մինչդեռ վճիռն գործադրուելու
վրայ էր, յանկարծ բանտին դռներն կը
բացուին, և շորս մատուցող տղայք իրենց չա-
րաբազմ մօրը զիրկը կը նետուին։ Աջիտ-
ղում տեսարան մըն էր, որ ականատեսից
սիրտը կը կնգեքէր։ այն փոքր տղայք չէին
կարող ըմբռնել իրենց մօրը սրտին օրհա-
սը։ Այ խօսք, ոչ ծայն կը լսուէր յայտարե-
ւարանին մէջ, այլ լաց և ողբ։ Եւ սակայն
անողբերի օրինաց վճիռը անհրաժեշտ և
իսկոյն սիրտի գործադրուէր։ Բանութեամբ
տղայքը մէկդի ընելով այն կիսամութ մօրը
եռեւէն մուսցութեան անխորտակելի գու-
ռը կը փակէին։

Այս դէպքս ինծի գաղափար մը կու տար
թէ մարդս ինչ և իցէ աստեղ տակ ծնանի՝
միշտ մի և նոյն կրից ենթակայ է։ Աճիւրառ
հասարակ թէ պարտքին մէջ աղատ մուտք
ունի և թէ խրճիթին տակ։ Թողի որ խոր-
հրդաժողովնք յառաջ տանին, ու ես ե-
լայ դէպ ՚ի վաճառանոցը ուղեւորելու։

Ի՛նչ տեսարան է որ կու տայ ինծի փո-
ղոցը։ Այս կէս մի անգղիացի ու կէս մը
հնդկի քաղաքին մէջ միաս աւելի գրաւող
բանը պէսպիսացոյն ժողովրդեան բազմու-
թիւնն է։ Հոս ոչ միայն մարդկային մոր-
թոյ կերպ կերպ զուոնոյ հանդէս մըն է,
հապա միանգամայն զգիտեցողինաց բազ-
մակերպ ձեռոց ու գունոց տեսարան։ Կար-
ծես մուսէնն մըն ես ուր տեսութեանդ առ-
ջին եռեւէ եռու կը յաջորդեն այլ և այլ
ազգաց, այլ և այլ ժողովրդոց, այլ և այլ
ցիւղերու նախատիպը։ Փարսին, այն նախ-
կին Պարսկային սերունդն, որ բռնութենէ
փախչելով հոս ապաւինեւ է, իւր զլխա-
ձե զլխաթիւղը ու սպիտակ զգեստովը՝
խորխորաբար քովէդ կը սահէ։ մերկան-
դամ քօօիք, բեռնակրութեան զբաղողք,
անտարբերաբար կը շտապեն. և այս ամե-
նուն և ուրիշ անչամար բազմութեան մէջ
խառնուած կը տնանս երկնասիւս սեռու-
թեամբ քաղաք սեւամորթ պղնձիները։ Հա-
պա ուր թողում գլխարկներուն կերպկերպ

ձեւը, գոյնը, մեծութիւնը. աչքդ կը չլիթի,
Առ հասարակ փաթթուցածն են, կարմիր,
կանաչ, մանուշակագոյն գոյներով, եղջիւ-
րաւոր կամ պարզ, պոչաւոր կամ անպոչ. և
ասոնց մէջ մերթ ընդ մերթ խառն կը տես-
նես նաև երոտյացի գաղթականին սա-
ղաւարտածն, հովանոցածն, ստոմանածն
և ամենայն տեսակ այլանդակ ձեով զըլ-
խաթիւր։ Իսկ խառնաձայնութիւնը. ուլ
կրնայ տնոր գաղափարը տայ. աշխարհիս
բոլոր լեզուներու հնչիւնը, չլիթի, ազմու-
րդը կարծես ժամատեղի ըրեր են վայրը, որ
ճշիւ Բարեւոյն խառնակութեան գաղա-
փարը կը զարթուցանէ յիս. յաւել ասոնց
վրայ քաղաքիներուն ընթացքը, դրամ-
վայից անընդհատ երթիւնքը, խաղաղանաց
ճայթիւնը, ձիոց ու եղանց կառքերուն
աղմուկը, և մուրացկանաց աղաչանաց
պէսպէս ողորդ։

Այս ինծի համար ամենեւին նոր տեսա-
րանը՝ մտածութիւնս կը գրաւէ, և ամեն
քայլ առնելուս՝ աչքս կը զգեսնու այն խառ-
նիճաղանձ բազմութիւնն դիտելով։ Առ
հասարակ ռամիկ ժողովուրդ կը թուի. սա-
կայն ինչպէս կարելի է անփորձ նորակի մը
ռամիկը աշխուհականէ զանազանելի, կա-
նայք և աղջկունք քան զարս կը գերադան-
ցեն բազմութեամբ. ամենուն վրայ շտապ
և զուարթութիւն կը նշմարեմ. կարծես մե-
ծամեծ գործոց կը փութան։ Առհասարակ
ամենուն ոտքը բոլակ է, և ճակատներն նը-
շաններով գրողմուած։ Ամանց ճակատը
ուղղահայեաց կարմիր գծերով գրողմուած
է, բոտ որում պահպանիչ վիշնուի պաշ-
տողք. այլոց ճերմակ ու կարմիր միտակա-
մայն. ումանց նշանը զուգահեռական գծե-
րով է. ըստ որում ապականիչ Հիվայի
երկրպագուք. և այլ ոմանց կարմիր կամ
դեղին կէտ մըն է։ Այլոց բոլոր ճակատը
ճերմակ գոյնով կըրած է. ոմանց ալ ոչ
միայն ճակատն, այլ և ողջոյն լանջըր կո-
վու ապաւառով ձեւիւած է։ Բոտ իրենց
դասակարգին՝ ամենը իրենց արտաքին նը-
շանադրուում ունին։

Զարեք իսկ չեն պակսիր վրաներնէն.
կանայք ոչ միայն ականջներնէն մեծագին
օղեր կախած են, այլ և ռնգունքներուն
վրայ մարգարտայեռ ու գոհարադարդ օ-
ղակ մը կը կրեն. թեւերնին ոսկեայ, արծա-
թեայ և ապակեայ այլ և այլ մեծութեամբ
ապարանջաններ կան, պարզ կամ զարդա-
չէն, յորոց միւր որ է մեծագոյնը՝ արմկան
վրայ կը կրեն։ Պարանոցներն ոսկեայ և ար-
ժաթեայ քառամանեակներու տակ ձաժ-
կուած է։ Ուրուքներն և ոտքերնին իսկ ան-
զարդ չեն. հաստ ու լայն արծաթեայ օղակ

մի դարչապարհին կռնկին վրայ կը յենու, մերթ տասնի չափ ուրիշ օղեր վեր բռնելով: քայլելու ժամանակին՝ ոտնամատից օղակներուն շառաչը՝ օղը կը թնդացնէ: Խակ ձեռաց մատոտիկները կիսով չափ մատնին հրով ծածկած են:

Էրիկ մարդիկ իսկ անմասն չ'են այս զարդասիրութենէն. շատերը ոչ միայն բրնձ-օղակ կը կրեն, հապա նաև ականջին հինգ, վեց և աւելի կարգ գոհարաւոր օղակներով զարդարած են: Խորհրդողորար կլիմային բնական քերմութիւնը հարգելի տածիչ չէ:


Պանա սպասաւորս՝ որ ուշադիր ետեւէս կու գայ՝ ապշութեանս նիւթը կը գուշակէ, մտածեալով՝ կ'ըսէ.

— Սահապ, մեր Հնդկներուն զարդասիրութիւնն զբեզ կ'ապշեցնէ. գիտցիր որ անոնց մի միայն ամբարտաւանութիւնը

պճնաօրոյթիւնն է. իրենց գոյնզգոյն ըզզեւտներուն փայլը աճեցնելու համար՝ բոլոր ճոխութիւննին ու շահէրնին կը հաւաքեն՝ ոսկեայ, արծաթեայ ու պղնձիզարդեր շինելու: զիշեր ցորեկ վրանին կրելով: Սա աղջիկներուն խումբը նայէ, որ ծիծաղելով ու խօսակցելով կը քալեն. վրայի զգեստնին երկու ռուփի շածեր, և սակայն իրենց վրայի զարդերը հարիւր ռուփիէ աւելի ամէք ունին: Ասանկ է ու հասարակ բոլոր Հնդկներուն բարբը. միշտ զարդարածքը ամեն բանէ վեր կը գերազանցէ:—

Եւ սակայն ինքը սպասաւորս վրան ամենէն զարդ չ'էր կրեր. և ոչ խակ իր ընկեր սպասաւորները. գուցէ անոր համար որ եւրոպացի եկաւորաց կը սպասաւորեն, կը գոյշանան որ չ'ըլլայ թէ անսխորժ երեւոյթ մը բերեն:

Հանգրիւծ այս դարդուց շապլութեանը՝



Համալսարան Ի Պոննէյ:

այն ուսմիկ բազմութեան օգտելի երևոյթը դիւ կը խորշեցնէ: Հատին զգեստը քանի որ զգեստ սկսեր է կոշտիլ՝ կ'երևայ թէ թափշի ձեռքը չ'է անցած. զգացած խորշումս՝ գոյշութիւնս կ'աւելցնէ՝ որ մէկի մը չ'զտիմ: Արդեօք բազմութիւնը միտքս կը հատկանար, թէ գերութեան երկիւղածութենէն յառաջ կու գայ՝ որ ամեն անգամուն սր աջ կամ ձախ կը խոտորիմ, զիմացս ելլող Հնդիկը հակառակ զին կը խուսափեն: Եթէ աչքս վերցնեմ երեսին նայիմ, անտր երկիւղիւ՝ իսկոյն աչքերնին վար կ'առնուն: Արդեօք պատկառանք է կ'ըսեմ, բուն երկիւղ թէ խորշում՝ որ այս զգոյշաւորութեան կը պարտաւորէ դիւրենք Եւրոպացոց առջին: Այս իրենց երկիւղածութեան զգոյշաւորութիւնը՝ ինձ նախնի Տաճարատանին պայմանը կը յիշեցնէ, և համարեւ կու տայ թէ տիղացուց առջին Եւրոպացին քաղաքակրթ եէնիչնորի մ'ըլլայ:

Հոգեկառաց նորակառոյց կայարանին ջովէն կը դառնամ. մեծագործ չ'ենք՝ որ գեռեւ շինութեան հետ է: Թէպէտ և արեւ իւր սաստկութիւնը դեռ չ'է բոլորովին ըստացած, բայց հանգրիւծ հովանոցիս սպաշապանութեանը՝ ինձ կը զգացնէ որ հովանաւոր տեղ մը ապաւինելու եմ: Եղանակը թէպէտ և ամենայն է, բայց անանկ ջրով՝ որ հրահրային իտալիոյ յունիս և յուլիս ամեններուն կը համեմատուի: Յորեկուան ջերմութիւնը այն աստիճանի է՝ որ նորեկը տունէն դուրս համառօտ չ'ընան մը գառնալով՝ հորկ է իւր հանդերձը գլխովին փոխէ. հոս մարդ կը հալի, բայց եթէ արեւ ամտանելի է, շուքս ալ նայնչափ անուշ ու զով: Սակայն մեծագոյն աղէկութիւնը գիշերն է. ըստ երկրին սովորութեան՝ պառկելէն յառաջ պաղ ջրի բաղնիք մը օրուան ջրմուկեան հետեւանքը կը կուտէ, որմէ ետքը գիշերուան անուշ զովութիւնն քնոյ քաղցրութիւնը կ'առաւել-

լու. շատ է՝ որ մարդ անհանդուրժելի մեծ-
դաց խայթին դէմ անկողնոյ պատասպարիչ
վարագոյր մ'ունենայ:

Այսպէս մինչդեռ շնդիկը այն եղանա-
կին ցորկեր ցուրտ կը զգայ, իսկ գիշերը կը
ստաի, նորկի և ևրօպայցին ցորկը կը չալի,
իսկ գիշերուան գովութեամբ իւր կորուսած
ուժը կը վերստանայ:

Ճամբան կը կտրեմ ու կայարանին դի-
մացի ծառոց շարքին հովանոյն ներքև կը
մտնեմ: Մուրացկանաց աղաղակները ա-
կանջս կը խլացնեն. ճամբուն երկայնու-
թեամբ հասն, վերաւոր, կոյր, պակասաւոր
Հնդիկը գետնը պառկած՝ պէս պէս ողորու-
ւոր ձայներով անցաւորաց լուսնի կը պա-
ղատին: Ամեն քոյլ առնելուս բազմաթիւ
ձեռք դէպ ինձ կ'երկնանոն, Սո՛ւնայ, Սո՛ւնայ
կանչելով. ամեն մէկուն ձայնը, ամեն մէ-
կուն ողորք, ամեն մէկուն շարժումը՝
երկայնժամանակեայ արուեստական կրո-
թութիւնը կը յայտնեն: Տառնամբայ կոյր
տղայ մը մասնաւորապէս կը զանապախի
ուժ միայն ձայնիւ, այլ և մարմնոյն շարժ-
մամբ, որ ինչպէս փիղք իրինքն գլուխը,
այսպէս ինքն ալ իր մարմնոյն ողջուն կոճ-
ղը աջ ու ձախ կը շարժէ, շարունակ մի և
նոյն ձայնը հանելով: Լեզուն չեմ հաս-
կնար, սակայն ինձ կ'երևայ թէ մինչդեռ
լուսնայի կողքէ, միանգամայն և կը սպառ-
նայ, ինչպէս թէ ըսէր. « ով որ չտայ՝ կրողը
տանի, ով որ չտայ՝ կրողը տանի »: շարու-
նակ նոյն համառօտ խօսքը և կողանակը կը
կրկնէ: Գոգցես սպառնալիքէն վախճա-
լով՝ երկու տառ արծաթիկ մը ձեռքը կը
դնեմ, և առանց երախտագիտական ցոյցի
մը սպասելու՝ ճամբաս կը շարունակեմ:

Ծառոց շարքին հովանին ինձ կ'առա-
ջնորդէ մինչև մեծաշէն վաճառանոցը, որ
բնկաց կամ՝ սև քաղաքին առերթիւր կան-
գնած է, ընդարձակ ու հոյակապ և մեծա-
գործ կողմ: Անշամար բազմութիւն մը ա-
նոր լայնարձակ դրան մէջէն կ'երթեկեկ է,
մինչդեռ կազմակիր բեռնակիրաց խուռք
մտից առջին հանգուն կան՝ պատրաստօր 'ի
ծառայութիւն: Երբեք կիսամբերի սեւամորթ
տղայք իրենց կողովներովը դիմ կը պատեն
ու ծառայութիւնին կ'առաջարկեն. այլ
Պանն սպասաւորս մէկիդ կը վարէ, և ինձ
կը դիւրացնէ այն մեծագործ շէնքին մտից
առջևը առ վայր մը դադարելու և ընդհա-
նուր հայեացք մը տալու: Հոն կը յիշեմ՝ և
իրաւունք կու տամ ոչ միայն բարկկամիս՝
որ ինձ կը յանձնէր այն տեղովն այցելու-
թիւնս զանց չընելու, այլ նաև քաղաքա-
ցւոց, որ կը պարծին իրենց վաճառանոցովը,
ինչպէս թէ գեղեցկութեամբ աշխարհիս ա-

ռաջինն ըլլար: Եղս, ընդարձակութիւն,
մարդութիւն, հանգստութիւն, կարգաւո-
րութիւն, ամեն բան այցելութիւն ախորժը
կը հրապուրեն: Վաճառաւորս 72000 քա-
րաւակուսի կանգուն միջոց բռնած է, և
ըստ այլոց ևս ականատեսից՝ աշխարհքիս
ամենէն գեղեցիկն է: Բոլորը կրանիդ քա-
րէ, երկթէ և ապակիէ շինուած է:

Երկու զլիսաւոր ընդարձակ սրահք կան.
միս՝ աջակողմեանս՝ դէպ 'ի հարաւ կը դի-
մէ. միւսը՝ ինձ հանդիպակաց՝ դէպ 'ի արեւ-
ելք: Ես դէպ 'ի աջակողմեանը կը խոտու-
րիմ, որ ծաղկանց ու պտղոց որոշեալ է, և
որու ընդարձակութիւնն է հարկեր յի-
սուն ոտք երկայն և հարկեր լայն: Իմ ու-
շտորութիւնս ծաղկանց բազմութիւնն ու
պէսպիսութիւնը կը գրաւեն. գեկտիմերի
մանուն մէջ ենք, և շատոց 'ի վեր այն
ծաղկանց շատին յիշատակը մտքէս ելած
է: Վարքը՝ իր պէսպիսութեամբը և առա-
տութեամբը կը գերազանցէ: Յասմիկը՝
կոյտ կոյտ՝ կանանց և աղջկանց առջին ձը-
գած է, որք համբերութեամբ ոսկէթել առ-
ղանիի վրայ կանցնունեն ու պսակներ կը
չինեն: Ոսկէծաղկունք, վերպէնայք և այլ
տեսակ տեսակ հոտաւէտ և գոյնզգոյն
ծաղկունք՝ իրենց բոյրովը տեղին կը լեցը-
նեն: Ես ալ ստոց վրայ նսեմ այն մէկա-
հոտ գաւազանիկները՝ որ ամեն դին շարու-
նակ կը վառեն և որոց անոյշ հոտը այցե-
լուին այնչափ ախորժելի է: Շատ ծաղ-
կունք կան՝ որ առ մեզ մամառային եղա-
նակին միայն կը զարդարեն մեր պարտեզ-
ները. իսկ հոս ընդ հակառակն՝ նոյնմե-
րէն մինչև մոյթիս առատաբար կը գտնուին:
Հիմա այնպէս յառաջացած է ծաղկագար,
մանութիւնը 'ի Հնդկիս, որ յԵւրոպ հա-
ղուարկիւտ կ'զած ծաղկները՝ հոս ամենա-
սովորական են. որովհետև մեծ նեցուկ է
ծաղկագարմանութեան՝ կլիմային քաղցրու-
թիւնը:

Որչափ ալ փիլիսոփայաբար մարդ ծաղ-
կանց նայի՝ չի կրնար ներքին մշման մը տե-
ղիք չտալ ու փունջ մը չգնել: Վարդի ու
յասմիկի փունջ մը ձեռքս առնելով՝ բա-
նիւ և ձեռով զինր կը հարցնեմ. իսկոյն քը-
սան ձեռք ծաղկանց փնջերով՝ դէպ ինձ
կ'երկնանոն. եթէ ուղեւորս զոսմենր գոհ չընէ՝
քանի մը բեռնակրաց կողովք պիտուր բնա-
ւեն: Սակայն Պանն սպասաւորս տարա-
կոյսս կը լուծէ. վրաս դիմողները մէկգի
կը վարէ. և ձեռքս փունջը հատուցա-
նելով՝ կ'անցնիմք սրահին հանդիպակաց
կողմը, որ պտղոց վաճառման որոշեալ է:
Ծաղկավաճառաց աղմկէն արդէն պըտ-
ղավաճառք զգացեր են՝ թէ նոր հիւր մը ե-

կամ է, և իրարու նշան իրենն թէ ինչպէս խաբեն, Հազար աչք կը տեսնեմ որ սեռ-րակ գիմանց մէջէն փայլուն փայլուն գէպ ինձի կը հային: Ամեն զիէն սահապ ձայ-նը գէպ ինձի կ'ուղղի. ամենը կը ջանան զիս իրենց ձգելու, իրենց վաճառած պը-տուղներն, իրենց պարտիզայ տարիներ-նեն ինձի ցոյց տալով: Անտարբերաբար և իբր անգգայ՝ ամենուն երեսը կը նայիմ, մինչդեռ անոնք սպասաւորիս կ'անկնարկեն:

Այս պտղոց առատութիւնը զիս կը հնա-ցընէ. շատը ամենին անձանթ են ինձ. ոմանք այլոյ եղանակի արդիւնք: Կտը-մրագոյն պանաններու կոյտի մը առջին կը գաղապարմ, զորոնք զիւստեն սեւամորթ մը իբր յաղթանակի թուրգ բուրգ առջը կան-գնած է: Համարիլով թէ ստանալ կ'ուզեմ՝ ծանր փունջ մը ինձ կը հրամցնէ. այլ Պա-նս մը միշտ չարժմանցս ուշ կը դնէ:

— Մի ատկէ, կ'ըսէ, սահապ. շատագոյնը և համազագոյնը գեղին փորագոյն մէկ մըն է, քիչ մը վարը կը գտնենք: —

Այս բնիլով՝ ինձ ուրիշ տեղ կ'առա-ջնորդէ, մինչդեռ պտղաւաճառ Հնդիկը օր-հնու թխտայ պսակ մը ետենէս կը կարգայ. սակայն այն օրհնութիւնք սպասաւորիս ձեռածիր մըն է՝ որ ինձ չի պատկանիր:

Քիչ մը անդին անանասի կոյտերու կու գանք. անանաս՝ որոյ համբոյր այնքան մեծ է յերոսպ, և որ ամենուն հնչուեալ մերձենալի չէ: Արդ բուն իւր հայրենիքն են, բուն անանասի բուսած մեղքն է. և հարկ է վայելիլ ի լաւագունիք և ի համեղա-գունիք: Մէկ մը կը նմարեմ միծաղոյն և գունով մութ կարմրորակ. անշուշտ հա-ստանագոյն և քաղցրագոյն ըլլալու է. գա-գաթին ծայրէն փունջ մը առակսխտ կայ նման նուրբ տուրեններու, թէպէտ աւելի մաղի թելերու նմանութիւն կը բերեն: Իս նշան կը համարիմ ազէկ հաստենութեան, և թափով երկու ձեռքս կը բռնեմ ու գէպ ի վեր կը քաշեմ. այլ այն կարծես գետնի վրայ հաստատուած գամուած է, տեղիք չի տար. չորս կողմն բազմութիւնը կը լռէ, մինչդեռ ես անանասը վեր ձգե-լու կ'աշխատիմ: Այլ յանկարծ անանասին տակէն երկու վատուծ ձեռքեր գէպ ի վեր կը նետուին ու ձեռքերս կը բռնեն. օձի մը պտղոտներու երկիւղը ինձ անանասը ձգել կու տայ, այլ ձեռքերուս վրայ գա-մուած են: Դիմաղջ չորս զիս կը բրդի. աշ-քերս կը բացուին ու կ'անգրադառնամ որ փոխանակ անանասի՝ քնացող հնդկի մը գլուխը ըմբռնած էի: Դիմաղջողաց ծիծա-ղակից՝ ի փոխարէն անպատեհութեան՝ լա-ւագոյն անանասը ընտրանք սպասաւո-

րիս ձեռքը կու տամ:

Շատ այլ անձանթ պտղոց մէջէն՝ մէկ քանին ի գէպ համարեցայ տուն տանելու: Ասոնց սակի էր տեսակ մը խոշոր նարնջի, զոր բովիս կը կոչեն (pumelo, pamplemou-sec), և որ խոշոր ձմերուկի մեծութեամբ կ'ըլլայ: Ներքին գոյնը կարմիր ու ձերմակ խառն է, և է քաղցրահամ և անուշ, թէ-պէտ թիթէ մը լեզուահամ. առատասնց և չըլագայութենէ մը հոքը՝ զովարսը և շատ ախորժելի է. այլ միանգամայն և զգու-շալի. անհնարին է առ անգամ մի ամբողջ մը ուտել. կտրած՝ չաւորիւր, այլ երեք և չորս օր և աւելի կը դիմանայ. բայց այն ստեն փորձարութիւն կը պատճառէ, զոր ի փորձոյ ստուգելիս: Արտաքին առեւտը-րոյ կարծեմ թէ նիւթ կրնայ ըլլայ, որով-հետէ նարնջի պէս՝ մանաւանդ թէ աւելի երկայն՝ կը դիմանայ:

Չմարուկն և սեխն տառտ է. սակայն առջինին ներքին տեղին տեսքը զիս ճա-շակելու չի հրապտեր. Նոյնպէս առա-տարսը կը գտնուի նարնջը, մանտորին կոչուածը, այլ ընտրելագոյն և համեղ: Խաղողն իսկ չի պակսիր, այլ փոքր կողմովի-նեբու ու տփերու մէջ՝ իբր ազնիւ բան՝ կը վաճառեն. բայց ոչ է Պոմպէի արդիւնք այլ Ջուրեկսպատեն ու Քապուլէն կու գայ, և է ընդհանրապէս թթուա՝ կատա-րեալ հասունացեալ չըլլալուն: Նոյն տե-ղերէն կու գան նաեւ ընկոյզ, փստուզ, չոր գեղձ և խնձոր: Թուզ, ելակ թարմ ու չոր արմուտ, և այլ տեսակ շնդկաստանի յա-տուկ պտուղք շատ են, բայց ընդհան-րապէս միւր քմացը ախորժահամ մէկ քա-նին է. միծաւ մասամբ լպրծուն համ մը ունին:

Մ'անկօ պտուղը կ'ըստի թէ Հնդկաստա-նի պտղոց մէջէն ամենէն համեղն ըլլայ. բայց գորաղարարս այն՝ պտուղը մայիս ամսուն մէջ կը սխի հասուննալ. ես շատ ուշ եկելը էի գոյն վայելելու: Յիրաւի կան կոնխահաս տեսակներ ալ, որոնք խաբե-բայ Հնդկին առիթ կու տան զօտարականք խաբելու. ինչպէս ինձ հանդիպեցաւ մա-րտ ամսուն մէջ, որ և շատ վատահամ գը տայ: Սակայն գիտցողք կ'սպաւսովին թէ մանկօն ընտրելագոյն է ամենայն հնդկ պտղոց:

Ինձ յաւէտ ախորժելի է պանանը. պանա-նը, կ'ըսեմ, որ իւր պէս պէս գոյնովը, ձե-ւովը ու մեծութեամբը՝ նախանձելի պտուղ մըն է մրգախորաց: Յորչափ եղէ ի Պոմ-պէյ՝ ոչ բերեք նուազեցող անանասը որը հնդկ անգամ քմացս ներքեւ ինչպէս: Այս եղաւ մի միայն ուտելիք՝ զոր կրցայ չըր-

ջադայութեանցս ժամանակը Հնդկին ձևա-
քէն առնուլ և ճաշակել: Իւր թզանման բա-
րակ մաշկը մատանց ծայրով թևթևաբար
վերցնելով, ճերմակ, փխրուն և անուշ մի-
սը կը մնայ, որ լիզուսին ներքեւ կը հալի:
Յիրաւի էթէ ուրիշ բանի համար Հնդկա-
ստան երթալ չափէր, գոնէ պանտալոնը
ուտելու համար երթալու էր:

Քրքոյի բնկոյղն առատութեամբը պանա-
նի կը համապատասխանէ. բայց եթէ քը-
մաց գրգռիչ բլլայու ուժը չունէցաւ գո-
նեայ ստուգեցի երկրին ինչ օգտաւոր
պատուը բլլալը: Այդքո տուած իւրը ոչ միայն
լուսաւորութեան կը ծառայէ, հապա նաև
բնիկներուն իբր օժիշ մարմնոյ: Այս ծառիս
պատուներէն Հնդկիք տեսակ մը ոգելից
բմայիլք կը թորեն, հեշտացուցիչ քմաց,
որով և կը գինովնան ալ:

Պտղոյ սրահին այցելութիւնս յինցնե-
լով, վաճառանոցին հարաւային թեւ կը
մտնեմ, որոյ երկայնութիւնը 150 ոտք է,
իսկ լայնութիւնը 100: Այս թեւ ինչպէս
բարձր կանաչեղինաց, բնդեղինաց և հա-
մեմոց որդեւալ է: Կ'ըսեն թէ հարիւր տա-
րի առաջ կանաչեղինաց մշակութիւնը ոչ-
ինչ էր 'ի Հնդկիս. իսկ հիմա այնքան յա-
ռաջացած է որ անհատնում տեսակներ կը
մշակուին: Գոմականաց տեսակը զիւ կը
հիաղեն. կան տեսակներ որ երբէք տե-
սած չէի: Սակայն այս վաճառանոցին մէջ
պանծանի և վարունդի ազգը բնտուրը
չատ զգուշալի է, կամ գոնէ շատ սուր ու
փորձ աչք ունենալու է, ինչպէս փորձով
իսկ տեսայ: Արովհետեւ ողջոյն այն վաճա-
ռանոցին սրահը մէկ միջրիւ չափ բարձր
տախտակամաներու գծելով բաժնուած
է ծայրէ 'ի ծայր: Այն տախտակամանները
զարժանալ խոր խոր որոշած է, ինչպէս
տառնձին տառնձին խանութ: Վաճառողը
վրան կծկած 'ի բերքերն առջևը դիզած
պարզած է: Եւ որովհետեւ շատ անգամ
երկու կամ երեք հոգի կ'ըլլան նոյն մասին
տէր ու վաճառող, երկայն սպասուել քը-
նոյ ծանրութիւնը կը բերէ: Այն արձա-
կուրդին միջոցը ոտք ու ձեռք պատնճան-
ներուն ու վարունգներուն հետ կը խառ-
նուին ու կը չփոխուին. և զիպա ինծի որ
պատնճան բունջ համարելովմ Հնդկի տիրո-
ջը անշուայ սրունքն ու թեւ վերուցի. բա-
րեբաղդաբար ջրի աղբիւրը հոն մօտ էր:

Համեմոց բաժինը ամենամոյս է: Կար-
ծել Հնդկին բլմբը ամանաւոր կերպիւ ա-
սոնց արամալորենալ է, մինչև որ իր ուտե-
լիքն առատաբար չհամեմէ 'չուտերն: Գուցէ
այս պիտոյքը կլիմային առողջաբանական
պայմանին պահանջ մըն է. անանկ որ ոչ

միայն այս վաճառանոցին մէջ, հապա նաև
քաղաքին փողոցոց կրպակներուն շատերը
համեմ կը վաճառեն, և յաճախորդ
անսպակաս են:

Հացագործի իսկ մոռցուած չէ, իւր բա-
ժանմունքն ինքի ալ ունի. և հացագործին
են բորգողայցի սեւամորթ և անկոչիկ հին
գաղթականք: Որոշ շարունակութիւն կ'ը-
նեն պանրաւաճառք, կարագաւաճառք և
այլ ուտելիաց վաճառողք:

Այն տեղւոյն երթեալ, այն բազմու-
թեան աղաղակը, այն զլուխներու զեռու-
ցումը չեն կրնար նորեկ եւրոպացի այցել-
ւորին վրայ տպաւորութիւն չընել. մանա-
ւանդ առաջին անգամուն որ տեղւոյն այց
կ'ըլլէ: Իւ հա իսկ իմ այս շրջանիս մէջ ա-
խորժելով կը քայլեմ այն խառնիճաղան-
ձին հետ խառնուած, զքոսանք զգալով ու
դիտելով ոչ միայն այն արգաւանդ երկրին
բերքերն, հապա նաև այն գոյեղգոյն բը-
գեստներով բնիկները, որ փոխադարձ
զարմանքամար ինծի կը նային և յարգու-
թեամբ ճամբայ կը բանան:

Այս երկու սրահներէն դուրս և որիչ է
մանդինաց և ձկնեղինաց վաճառանոցը.
սակայն այն տեղին այցելելու ոչ երբեք
համարժանեցայ: Թէպէտ և ջրին առա-
տուրթամբը այն տեղւոյն մարութեանը
մեծ հոգ կը տանին, սակայն կլիմային տա-
քութեանը պատճառաւ այն վաճառանոց-
ներէն հոտը քնքելու անկարելի է. անոր հա-
մար ալ միշտ հեռուանց բերելով կ'ան-
ցնէի:

Հաւաքավաճառաց ու թռչնավաճառաց
բաժանումն ուրիշ մասնաւոր թեւ մը կը
ձևացնէ: Թռչնաւոր իւր ախորժը գրե-
թէ լիովին կրնայ յագեցնել: Ի Պոմպէյ
յաճամաղ շոգենուճք՝ այլ և այլ երկրորե-
րու թռչունները հոն կը բերեն 'ի վաճառ-
չորս կը գերազանցեն թութակք, պլպուլք,
գեղձաճիկք, և այլ կերպ կերպ և գոյն-
զգոյն թաշունք, ընդ որս և կապկունք, եղ-
նիկք, և այլ կենդանիք: Սակայն այս: Թռ-
չնականաց զինն ալ բնդգէմ ամենայն ակն-
կալութեան, ծանր է: Զոյգ մը գեղձա-
նիկ, օրինակի համար, մինչև երեսուն և
քուռաուն Ֆրանգի կը ծախուի: Աժնա-
գերն Պոմպէյի թութակքն են, որոյ ձա-
գերն՝ մինչև կէս Ֆրանգ կ'աժեն: Սակայն
և այս տեսակ թութակք, որ ամենէն հա-
սարակը կը համարուի, ամենէն խելացիք
և ամենէն աշխոյժն է: Ասոր պայցոյցը
իմ իտլիքեդոս կու տայ, որ Պոմպէյի թու-
թակաց մէջէն կարծեմ ամենէն գողտրն է:
Այնպէս կը կապուին մարգու՝ որ շան մը
պէս ետեւէն կ'երթան: Մարմնոյն ձեւը,

զիշուն աղուորութիւնը, կոնաչ փետուր-
ներուն փայլը, և ամենէն աւելի անոր
ընտանութիւնը՝ թոշնոց մէջէն աւելի սի-
րելի կ'ընեն զինքը: Եւրոպայի ճանապարհ-
հորդաց ներկայութիւնը անպակաս է այս
վաճառանոցի մէջէն:

Մեր վաճառանոցին ստորագրութեան
վերջը գտնով բոլոր այս շինուց մէջնեղի
միջոցը մշտականաչ պարտէղ մը բռնած
է, որոյ կնգրոնէն մշտաճառ և զեղեցկա-
լէն սղորհրի մը ջուրը յարատեւ կ'արբու-
ցանէ անոր գոյնզգոյն ծաղկանց տունկերը:
Սյա աղբիւրս կանգնողը ճոխ Փարսի մը
եղած է, որոյ տյլ և այլ առատածնունդ
թեան արդեանցը համար՝ անգլիական
վարչութիւնը արձուականութեան տնտես-
ւոյ տուած է: Աղբիւրս անդրինեղով զար-
գարած է, որք Հնդկաստանի այլ և այլ
գետերը կը ներկայացնեն:

Մասնաւոր ծաղկազարման սպասուորք
չարունակ նոյն լպարտէղ խնամելու հետ
են, տունկերը ջրելով, ծառերը հոգալով,
ծաղիկները դարմանելով, և այն շաւիղե-
րուն և փոշիները՝ զով շարունակեալ ջրով
նստեցնենք: Այնքան զուարճութիւն ազ-
գած է ինծի այս անգղայս տեսութիւնը՝ որ
շատ անգամ նոր նոր տեսութիւն տյցելած
եմ, և միշտ առանց անդրադառնալու որ
ծածկը երազութեամբ կ'անցնէի. և
այն զգացած զուարճութեանս աստի միշտ
ըսած եմ թէ յիրաւի է պարծել Պոմպէա-
ցոց իրենց վաճառանոցին վրայ:

Հաճոյացեալ պտուղներու հումքամբ՝
ուրա վաճառանոցին գունէն դուրս կը զը-
նեմ և քայլս գէպ 'ի պանդոկը կ'ուղղեմ,
անապարելով միջաճաշի ժամուն հասնե-
լու: Սակայն խանութպանից միջնորդներու
խումբ մը զիս կը պաշարէ գէպ 'ի շրջակայ
խանութիւններ ձգելով: Վաճառանոցին հի-
սիսային կողմը՝ ընկերներուն քաղաքին ընդ-
հանուր ճակատը՝ կրպակներու շարունա-
կեալ զիծ մըն է, Հոն ամեն տեսակ ձեռա-
գործի նիւթ կը գտնուի: Սակայն երից ժա-
մուց հոգնեցուցիչ այցելութիւնս դիս հան-
գըստեան կը շտապիցնէ: Գրիթէ կուուե-
լով՝ այն յամառ հրախրողաց ձեռքէն կ'ա-
ջատուի ու քիչ և՛ ետքը պանդոկը կը
հասնիմ:

Խոնջ ու վաստակեալ միջոճաշէն յե-
տոյ սենեկին մթութեանը մէջ հանգիստ
կը բնտեմ: Սակայն տեսութիւնս սենե-
կիս միջնորմէն դուրս սանդղին վերը եր-
կու անպատկառ աշքեր կը նմարէ, որ մը-
թութեան մէջէն երկու ագամանդից փայ-
լը կը նմանին: Աշքերս մէկմի կը դարձ-
նեմ, բայց կամայ ակամայ դարձեալ Հոն

կը տանիմ, և դարձեալ այն սեռորակ գէմ-
քին փայլուն աշքերը հոն սեճեռեալ գէպ
'ի սենեակս կը նային: Կը համբերեմ և
աշքերս կը գոցեմ:

Բայց երեւակայութիւնս կը ջերմանայ, և
անպատկառութեան զիպաց կրիք:

— Ուրեմն, կ'ըսեմ, Հոս տեղս առանձ-
նութեան հանգիստ բնտեղը կարելի չէ: —
Նեղսրտութեամբ կը կանգնիմ, գլխաւը
կըս կ'առնում և սպասուորիս ձայն կու
տամ՝ ինձ գէպ 'ի Աստորիոյ հիւպատոս-
րանը առաջնորդելու: Սենեկիս 'դռնէն
դուրս՝ աշքերս գէպ 'ի փայլուն աշաց վայ-
րը կը տանիմ, և մի և նոյն աստի սեա-
մորթ կատու մը սանդղին ծայրէն ոստոս-
տելով վար կը գաճավովի: Գազտիթը կը
լուծուի: Կատունին աշքերն ունայն տեղ
զիս խռովիւր էին: Բայց մղումը մէյնը ա-
ռած էի. հարկ էր որ Աստորիոյ հիւպատին
երթայի յանձնարարականքս ներկայացնե-
լու:

Քսան վայրկեան ետքը է'ֆիկնսդըն սրբոյ
բոլորչի հրապարակին էի, որու կնգրոնը
ջրի աւազանով զեղեցիկ ծաղկազարգ պար-
տէղ էր ինձ: Հրապարակը կամարա-
կապ ու մեծագործ շէնքերու բոլորչի մըն է,
որ գլխաւորապէս վաճառականաց և առ-
ևտրական գործոց սենեակք են: Հոն մօտ
է նաև անգլիական մայր եկեղեցին: Հոն
մեծ դրան մը ճակարտ Աստորիոյ և Իտա-
լիոյ հիւպատոսաց նշանադրոյ մը կը նշմա-
րեմ, և անմիջապէս տախտակեայ սանդղի
մը աստիճաններէն առաջիկ դռնիկոնը կ'իշ-
լեմ: Բոլորսն, կապտազգեստ Հնդկի ըս-
պատուոր մը զիս կը դիմաւորէ. անոր ու-
սին ոսկեհիւս լայն ժապաւէնը և աւտորի-
ական ոսկէգոծ երկզլուխ արծուին՝ ինձ կ'ը-
սեն թէ հիւպատին սպասաւորն է: Հարց-
մունքս իրեն ուղղելով՝ ինձ ընդարձակ սը-
րահի մը մէջէն՝ հիւպատին սենեակը կ'ու-
ռաջնորդէ: Հինգ կամ վեց Փարսի և Հըն-
գրի գրագիրք՝ առանազգեստ անգլիանոց առ-
ջին նստած՝ կը գրեն. տեղին աւելի վաճա-
ռականի սենեակ է քան հիւպատոսարան:
հիւպատին սենեակին իսկ վաճառականի մը
գործատնտեղուն երեղոթն ունի: Եւ յիրաւի
այդպէս է. որովհետեւ հիւպատք 'ի Պոմ-
պէյ, գոնեա Աստորիոյ և Իտալիոյ, ոչ մի-
այն իրենց սեփական տէրութեանց ներ-
կայացուցիչք են, այլ և նաւական գծե-
րու գործադրատարք: Այսպէս և Աստորիոյ
հիւպատս, առ որ յանձնարարական ու-
նէի 'ի հիւպատէն Վենետիկ, ոչ միայն
տէրութեան ներկայացուցիչ էր, այլ և
լայն հնդկային գծին գործակատար, և
առանձին վաճառական:

ի Հնդկիս, ինչպէս նաեւ ամեն Հեռուոր երկրներն, եւրոպացի օտարականք իրենց սակաւութեանը պատճառաւ՝ իրարմ վերայ իբր բնտանի, իբր ընկեր, իբր եղբայր կը նային։ Նորեկի մը գալուստը գիրնեք կը զրդէ անոր ընկերութիւնը բնտուելու, և անկէ Հայրենեաց լուրերը լսելու. և այսպէս նոր Հիւրոց ամենայն մարդասիրութիւն կը ցուցնեն։ Որպէս եղաւ և ինձ սատ ՚ի Հիւպատոսարանին. և սիրոյ և ջերմ ընդունելութիւնէ մը ետքը, Հիւպատին միջնորդելով լուսագոյն և ըստ տեղւոյն բաւականապէս Հանգիստ բնակարան մը յաջողեցայ գտնել։

Հինգ օր միայն բնակեցայ ՚ի Սանդրայ Օդէլ իտալական պանդոկը. վեցերորդ առաւօտը, առանց ունկն մատուցանելու պանդոկապետին, որ զիս քովը թողակաւոր բռնելու համար ամենայն ներողամիտ ուշադրութիւն կը խոստանար, փոքր կուհիովս ՚ի Սարկըն տունը թողակաւոր կը մտնէի։ Նոյն տունը արդէն թողակաւորք կային։ Գաղղիացի մը, Չուիքըրսոցի ժամագործ մը, և Անգղիացի պաշտօնախնդիր պատանի մը, էթէ նոր սենեակս բոլորովին խնդրածիս համեմատ չէր, գոնեա պատշաճագոյն էր։ Անպաշտաճութիւնը, զոր ես սկզբան կ'անդիտանայի, ընտկաց թուոյն վրայ էր. կը համարէի թէ բնակարանին վարձքին հատուցումը յինէն ըլլալով, անոր վայելքն ալ իմս միայն պիտոր ըլլար. սակայն առանց պանդոկապետին գիտութեանը հաշիւ կ'ընէի. շատ չուշայայ հասու ըլլալու՝ որ նոյն սենեակը գրեթէ կենդանաբնական ապաստանարան մըն էր։

Հագին թէ տոջի գիշերը վարագուրաց ներքեւ ամբիփուսած՝ միջան մէջ քնոյ Հանգիստը կը բնտուէի, անկողնիս շորս կողմը քայլելու ազմուկ մը սկսայ լսել. մկան էր քաղուածը, կատուի թէ այլոյ կենդանույ. հապա եթէ օձի մը այցելութիւնն ըլլար, որ գծուաքին բան մը չէր, ինչ ընելու էր։ Հարցումս առանց լուծելու՝ միւս կողմը դարձայ, Բայց անմիջապէս քայլոյն ալ մագլցելով վարագուրներէն վեր սկսաւ կլլել. և ինչպէս թէ լարախաղաղ մը ըլլար՝ վեր վար վազվաւտել, իջնալ, ելլել, որպէս թէ պար լուներ։ Հանգիստս կորսնցնել չէր արժեք. Հիւրիս բարի զուարճութիւն մաղթեցի. անշուշտ, կ'ըսէի, ինչ ալ ըլլայ, մուկ ըլլայ, կատու թէ օձ, կամ թէ Հնդկի մը ուգին, անսիրութեանս առջին ձանձրանայ ու տեղիք տայ պիտի։ Անկախութեանս հալաւակ բոլոր գիշերը զուարթ պարահանդէսը շարունակեցի։

Առաւօտու լոյսը այն գիշերային անկողնայելուն հալածեց. բայց նորատեսակ աղմուկ մը տշքերս բանալ տուաւ։ Արեւը ծագեր էր՝ իւր կարմրորակ ճառագայթները շեշտակի վարագուրիցս վրայ նկարելով. թռչնոց մերձաւոր ճռուողիւն մը ալ կանջս խայթեց. վարագուրին ծայրէ մը տեսնելով՝ Հինգ ոստոսատող ճանդուկ գետնէն փշրանքները կը քաղէին։ Ուստի մը տեք էին այս նոր Հիւրք։ Աչքս պատուհանաց կը տեսնիմ. այն վանդակափեղք այնքան ճարտարութեամբ շինուած էին, որ ազգաւս անգամ ազատ մուտ կրնային ունենալ. ապակւոյ կիրառութիւնը ունայն է ՚ի Պոմպէի։

Այն օրէն սովորեցայ առաւօտները թռչնոց ձայնին հնազանդ զարթնուլ. իսկ ազգաւոր թէ և պատուհանիս վրայ կու գային կը հանգչէին, ոչ երբեք համարձակեցան ներս սենեակը մտնելու։

Սակայն առաջին օրուան Հիւրս ձանձրացող տեսակէն չէր. իւր այցելութիւնները շարունակեց, կարծես ինձի մեծանայու գիտամբ. այլ ապահովացուցած վարագույրք միշտ խափան էին, և միայն վեր վար վազվաւտելով կը գոհանար։ Բայց գիշեր մը համբերութեանս հասաւ. ալ ուզեցի անշնորհ Հիւրիս Հետ ծանօթանալ. ո՛հ, կ'ըսէի մտօքս, եթէ Հնդկի մը ոգին ըլլայ, որ կ'ըսեն թէ շատ կան թափառական, որչափ Հետաքրքրութեան աղբիւր պիտի ըլլայ ինձի, Հրագն անցուցի ու լռիկ կը մնայի. և ո՛հ ահաւատալիմ՝ իւր այցելութեանցը՝ իսկոյն սկսաւ վարագուրից վրայէն մագլցել. անապարիցի ճրագը վառելու. բայց Հիւրը զիսական երազութեամբ անց անյայտ եղաւ. Համբերութեամբ աննկիս րոյրը կու գամ Հիւրը բնտուելով. յանկարծ թռչող մութ մարմին մը անկողնիս վրայէն անցնելով՝ գնաց պատին դարձուցաւ մնաց։ Այս անգամուհ, ըսի, տեսնած թէ ո՛վ է, իրկու, երեք չորանով հալածանական վարեցի, մինչև հարուածի մը ստիկ ընկճեալ մնաց. գեղեցիկ սեւագոյն պատենաթիւ մըն էր թթաշափ մեծութեամբ, Բայց մինչդեռ զայն գետնէն կը վրայցնէի, սպեքերս գէպ ՚ի որմը գնացին. Հոն նոյն միջատաց լեգէոնը այլ և այլ ուղղութեամբ կը վաղէին։ Ու վայր մը կեցայ զարմացմամբ. ինչ ունէի ընել, զամէնը հայտնի, ջարդել անհնարին էր. թողուլ անկողնին դառնալ կը մտածէի, երբ անոնց ետեւէն մոզնաք տեսնակներ տեսայ, որ նրմանապէս պատէ պատ կը վազվաւտէին։ Աչքերս գոցեցի, անշուշտ ըսի, ասոնց եւ տեւէն կարծեք և օձք պիտի գան. անոնցմէ

հոքին ալ ո՞ր գիտէ ինչ: Հասկոցոյ որ նոյն սենեկին իրաւունքն միայն իմն չէր. Թողի եւ անկողին մտայ:

Թմրութիւնը չուշացաւ աչքերս զոցելու, բայց այն թմրութեան մէջէն վրաս քայլողքան մը զգացի: Նստալաւ վեր նեւտունցոյ եւ ձեռքս ճրագին տարի. կը հտմարէի թէ այն անակնկալ հիւրը հնգկային համրուաւոր օձերէն մէկ մը ըլլայ: Գաւազանով ձեռքս դինած, վարագուրին տակ կը հսկիմ. չափաւոր մեծութեամբ սեւ մուկ մը անկողնիս վրան վեր վար վազելով կը խաղար: Գաւազանը գահավիժարոր ինչաւ, բայց անկողնի հիւրը հարուածին իջնալուն չալասեց. անկողնին մէկ անկիւնէն ինքզինքն գահավիժեց, և անմիջապէս

մերձակայ ծակ մը մտաւ: Երկրորդ հարուածն ինչու երագարար, բայց անմիջապէս փռիի ամպ մը տեսարանը ծածկեց. մկան դիակին տեղ՝ գետնին տախտակին խորտակած կտոր մը մնաց:

Ստոի կրցեր էր մուտ ունենալ այն անախարժ հիւրը. Թուի թէ Պանա սպասուորին հետ դաշնադիր կռած էր. որովհետեւ վարագուրին մէկ փոքր ծայրը զգուշացրելու անհոգացած էր:

Այս անգամուն ծանօթանալով սենեկիս բնակացը՝ համբերել առաջադրեցի, եւ անոնց հետ բնակակից ըլլալու հաստատուն դիտաւորութեամբ՝ Թողի որ ջուրը իւր ճամբէն երթայ:

Կը շարունակուի:

Հ. ՅԱՎ. Վ. ԻՍԱԳԵՐՅԱՆ

ՀՍՏՈՒՄՆ ԲԱՆԱՄԱՅԻ ՊԱՐԱՆՈՑԻՆ

Սուէզի պարանոցին բոցուելէն վերջը՝ մեր դարուն պարծանք պիտի ըլլայ մեծ առաջարկութեան մ'ալ լուծումը անցընել իր նշանաւոր տարեգրաց մէջ, որ է երկրագնդիս երկու ընդարձակողն ծովերը՝ Բանամայի պարանոցին հատմամբ՝ ջրանցքով մը իրարու հետ միացընել ու վաճառականութեան և ազգայն հարստութեան նոր և յուսալից ապագայ մը պատրաստել:

Այս հսկայական ձեռնարկն՝ արժաւնաւոր նախանձորդ և մրցանք մը պիտի համարուի՝ ինչուան հիմայ երեցած ջրաբայխական ճարտարագործութեան զարմանալի գիւտերուն և հին և նոր մեքենականութեան մեծագործ արդեանց: Գիտութիւնը, արուեստը և նախնի դարուց իշխանութիւնը՝ զարմանալի և մեծանուն հանդիսացան իրենց մեծագործութեամբը, և որոց ապացոյցք են ինչուան մեր օրերն իջիպտոսի բուրգերն, ճինաստանի անծայր պարիսպն, հրաշալի յիշատակարանը և կոթողք արեւելեան ամբարտաւան

ճոխութեան, հոյակապ շինուածք յունական, եգիպտական և հռոմէական աշխարհաց, և բազմաթիւ ջրանցքներ երկնային կոշտած թագաւորութեան (Չինաստանի) և Ասորեստանեայց: Սակայն նաև մեր դարուց քաղաքակաւ նութեան շինութիւնը՝ ոչինչ ընդհատ օգտակար և հիմնալիք են. բազմաթիւ գետնուղիք և լեւանցամէջ դժուարին անցք, նաւարկելի ջրանցք, ծովային և ցամաքային մեծագործութիւնը: Ասոնց մէջ ամերիկեան այս նոր ձեռնարկն, թէ բնաբանական, թէ երկրաբանական, թէ նաւական ուսմանց նկատմամբ, և թէ ընդհանուր և անտեսագիտական կարեւորութեամբ՝ պիտի գերազանցէ քան զմեծամեծ ջրանցս երիի, Վէլլանտի, Ռիտոյի, Հոլշթայնի, և քան զբազմահայկն Հիւսիսի, Քալետոնիոյ, և Կորնթոսի, և քան զճրագիրն Մանիքայի ստորերկրիայ ուղւոյն, և քան զհին ասորիկեան աշխարհին մէջ կատարուած՝ Կարմիր ծովը Միջերկրականին հետ միացընող անցքը: Ոչ եթէ Սուէզի ծովային